*ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2017, 70, № 2, 95-97*

**ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ**

## ԳԵՈՐԳԻ ԻՍԱՅՈՒ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ
## (Ծննդյան 110- ամյակին)

Լրացավ գրունտների մեխանիկայի և ինժեներային երկրաբանության բնագավառի ճանաչված, ականավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ***Գեորգի Իսայու Տեր-Ստեփանյանի*** ծննդյան 110- ամյակը:

Գ.Տեր-Ստեփանյանը ծնվել է 1907թ. ապրիլի 3(16)-ին Թիֆլիսում, անասնաբույժի ընտանիքում: 1924թ. ավարտել է Թիֆլիսի քիմիական տեխնիկումը և ընդունվել Թիֆլիսի ճարտարագիտական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճանապարհա-կամրջաշինական ֆակուլտետը, որն էլ ավարտել է 1931թ.: Իր գիտական գործունեությունը նա սկսել է դեռևս ուսանողական տարիներին, իսկ ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո, 1932-1941թթ. աշխատել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) տարբեր գիտահետազոտական ինստիտուտներում, գրունտների մեխանիկայի ասպարեզում իրականացնելով մի շարք հետազոտություններ: Միաժամանակ դասավանդել է հաղորդակցության ուղիների և կոմունալ շինարարության ճարտարագիտական ինստիտուտներում: Լենինգրադի կամուրջների վերակառուցման հետ պայմանավորված՝ զբաղվել է կամուրջների հենասյունային հիմքերի խնդրով, ինչպես նաև հետազոտել է Լենինգրադի, Նովգորոդի, Չիտայի, Մուրմանսկի, Կիրովսկի և ՍՍՀՄ այլ քաղաքների շինարարական հրապարակների գրունտների հատկությունները:

1936-1939թթ. Գ.Տեր-Ստեփանյանը, որպես կարևոր օբյեկտների շինարարության փորձագետ, գործուղվել է Իրան: Միաժամանակ Թեհրան, Թավրիզ, Մեշհեդի և Սպահան քաղաքներում շինարարություն իրականացնելու նպատակով ուսումնասիրել է շինարարական գրունտների հատկությունները: Վերադառնալով ՍՍՀՄ, նա 1939թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ շարունակելով գրունտների շինարարական հատկությունների ուսումնասիրությունները Լենինգրադում և Մուրմանսկում: Մասնակցել է Կույբիշևի հիդրոէլեկտրակայանի ջրամբարի նախագծման աշխատանք-

ների ընթացքում իրականացվող Վոլգայի սողանքների հետազոտություններին: Մեծ Հայրենականի տարիներին Գ.Տեր-Ստեփանյանը ղեկավարում էր Անդրկովկասյան երկաթուղու սողանքային տարածքներում գնացքների անվտանգ երթևեկության կազմակերպման աշխատանքները:

1945թ. Գ.Տեր-Ստեփանյանը հրավիրվում է ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ, որտեղ գլխավորում է հիդրոերկրաբանության և ինժեներային երկրաբանության բաժինը: Հետագայում նրա ջանքերով կազմակերպվեց գրունտների մեխանիկայի լաբորատորիան և նրան կից համապատասխան գիտական սարքավորումների պատրաստման փորձարարական միավորը:

1945-1978թթ. Գ.Տեր-Ստեփանյանը աշխատել է ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում: 1956թ. ստացել է տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1977թ. «երկրամեխանիկա» մասնագիտությամբ ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1996թ. դարձել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Անգնահատելի է Գ.Տեր-Ստեփանյանի ներդրումը գրունտների մեխանիկայի, ինժեներային երկրաբանության և երկրամեխանիկայի բնագավառներում: Դեռևս անցյալ դարի երեսնականներին նրա կողմից հայտնաբերվել է տեղաշարժի ընթացքում գրունտների թռիչքաձև վերադասավորման երևույթը: Նրա կողմից առաջին անգամ նկարագրվել է ծովային կավերի կառուցվածքի մետակայունության երևույթը և մշակվել են նրանց ուսումնասիրման եղանակները: Գ.Տեր-Ստեփանյանը հեղինակն է լանջերի խորքային սողունակության հասկացության, ինչը թույլ է տվել վերլուծել սողանքների առաջացման մեխանիզմները, կանխատեսել լանջերի փլուզումը և իրականացնել հակասողանքային միջոցառումներ արդեն խորքային սողունակության նախապատրաստման փուլում: Նա նաև մշակել է սողանքների հետ պայքարի եղանակ, որը հիմնված է լանջերի դինամիկայի մոնիտորինգային միջոցառումների կազմակերպման և գրանցման վրա: Նա հայտնաբերել է նաև խոշոր ժայռակտորներ և ապառաժներ տեղափոխելու ընդունակ հիդրոդինամիկ հեղեղների հոսքային բնույթը, ինչը հանգեցնում է աղետալի հետևանքների: Նրա կողմից առաջարկվել և մշակվել են սողանքային ճեղքերի մանրամասն մորֆոգենետիկ դասակարգում և շենքերի ու կառույցների սողանքային դեֆորմացիաների որոշման եղանակներ: Այս հետազոտությունների արտացոլումն է «Լանջերի երկարատև կայունության մասին» մենագրությունը՝ հրատարակված ռուսերեն (1961թ.) և անգլերեն (1963թ.):

Գ.Տեր-Ստեփանյանը, հիմնվելով շինհրապարակներում գոյություն ունեցող տարբեր տեսակների գրունտների ուսումնասիրման արդյունքների վրա, հայտնաբերել է հիմքաշինության համար կարևոր նստվածքների կուտակման տեսակ: Վերջիններս գոյանում են նախալեռնային գոտիներում տարածված ավազակավային շերտախմբերում ժամանակավոր ջրային հոսքերի գործունեության հետևանքով և բնու-

թագրվում են ճկման բացակայությամբ: Ինժեներային գեոդեզիայի ասպարեզում Գ.Տեր-Ստեփանյանը մշակել է նոմոգրամների կիրառման վրա հիմնված դիտարկման դիֆերենցիալ գրաֆիկ եղանակ, որը հրատարակվել է «Սողանքների դինամիկայի ուսումնասիրման գեոդեզիական եղանակներ» մենագրության տեսքով (Մոսկվա, 1972, 1976, 1978):

Գ.Տեր-Ստեփանյանը մասնակցել է երկրամեխանիկայի հարցերին նվիրված մի շարք միջազգային կոնգրեսների և գիտաժողովների աշխատանքներին: Բազմիցս դասախոսություններով հանդես է եկել արտասահմանյան երկրներում (Ճապոնիա, Շվեդիա, Բելգիա, Ֆրանսիա, Լեհաստան և ուր.): Երկար տարիներ գլխավորել է ՀՍՍՀ ԳԱ հիդրոերկրաբանության և ինժեներային երկրաբանության Գիտական խորհրդի սողանքային հանձնաժողովը, ինչպես նաև անդամակցել է միջազգային մի շարք ընկերությունների և միությունների: 1967թ. նա հիմնել և ավելի քան քսան տարի գլխավորել է «Երկրամեխանիկայի խնդիրներ» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ՀՍՍՀ ԳԱ գիտական աշխատանքների ժողովածուն: Նրան են պատկանում մի շարք հեղինակային վկայագրեր, ինչպես նաև վիբրացիայի և ֆիլտրման օգնությամբ կախված մասնիկների նստեցման մեթոդի հայտնագործման համար ԱՄՆ-ում (1999թ.) և Կանադայում (2001թ.) ստացած արտոնագրերը:

Գ.Տեր-Ստեփանյանը հեղինակ է ավելի քան 300 գիտական հրապարակումների, այդ թվում՝ 10 մենագրության, որոնցից շատերը հրատարակվել են արտերկրում: 1989թ. լույս տեսավ նրա «Բանական մարդիկ» գիտա-ֆանտաստիկ վեպը, որն արժանացավ ընթերցողների ջերմ ընդունելությանը:

Անհրաժեշտ է շեշտել Գ.Տեր-Ստեփանյանի ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը շրջակա միջավայրի աղտոտման և հանրապետության բնապահպանական հավասարակշռության խախտման խնդիրների և մասնավորապես՝ Սևանա լճի մակարդակի անխնա իջեցման և Հայկական Ատոմակայանի ռադիոակտիվ թափոնների անվտանգ պահեստավորման հարցերի վերաբերյալ:

Կյանքի վերջին տարիներին Գ. Տեր-Ստեփանյանը մշտական բնակություն հաստատեց Կանադայում, ուր վախճանվեց 04.12.2006թ. (հուղարկավորված է Երևանում):

Գիտական լայն մտահորիզոնով, բազմակողմանի հետաքրքրությունների տեր, հայրենիքին և ընտանիքին նվիրված անձնավորություն. այսպիսին են հիշում Գ.Տեր-Ստեփանյանին գործընկերները, աշակերտները և բոլոր նրանք, ովքեր առիթ են ունեցել շփվել նրա հետ:

*ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ*
*«Գիտություններ Երկրի մասին» ՀՀ ԳԱԱ Տեղեկագրի խմբագրական խորհուրդ*